

եանցը (անիկա խուսափեցաւ իր մականունին հիմնական մասը՝ Մելիքը պաշտպանելէ, ինք՝ որ դասակարգային անարդարութեան դէմ գրոհ էր բացած այն մատաղ եռանդով, ինչպէս ուրանալէ) այդ խաւար-բակ սենեակին մէջ, ուրկէ մարդահասակ գուբերու մարմինները, հսկայ յետոյքներու վրայ պազած կուռքերու նման կը նստէին անոր ալ միտքի բակին, իրենց բերանին վրայ գլխարկի պէս կրելով շրջուած գրիւր, լեցուն՝ գոյն-գոյն հեղուկներով, Այրարատեան Հայաստանի ամէնէն հին ու գողտր արհեստը պատմող: Հա՞յրը: Ի՛նչ յիմար եղաւ Մաթիկ Մելիքխանեանը, կարծես ամչնալով այդ մարդը դնելէ այդ գուբերուն խորհուրդին մէջ, երբ մելիքութիւնը կը թելադրէր ուրիշ աշխարհ, ուրիշ արձակութիւն: Լուեց անիկա: Ես յօրինեցի այդ մարդը: Քիչ մը հօրմէս, քիչ մըն ալ դրացի էգեկէլէն փոխ տարրեր առնելով ու նետելով անոր կենդանագրին խմորին: Էգեկէլը - ուստա, ինքնատիպ, լեզուն բերնին դարձող ու սատանին չափ հնարամիտ յաճախորդներուն աչքերը շլացնելու ներքին իր սեփական խառնուրդներով- կանուխէն կուզ կապած, գուբերու անդունդներուն վրայ ծռելէն-ծռելէն: Անշուշտ: Մաթիկ յիշեց իր ուղեղին փակած պատկերը անոր մատներուն, որոնք երբեք չեղան գոյնովը ուրիշներուն: «Ճերմեկելը» մոռցող այդ մատնէ՛րը: Բայց չյիշեց անոր ձայնը, աչքերուն գոյնը, հոգիին կերպարանքը, այսինքն՝ այն ամէն անկշռելի տարրերը, որոնք անէին արտածորումը, առարկայումն են ինքնիրմէն ու բիւրեղացող, մա՛նաւանդ մարող հոգեյատակներու, եւ որոնցմով մանուկը քիչ-քիչ կը ստանայ իր հայրը հոգեպէս, ըլլալու համար զայն լիութեամբ, երբ աւարտի անոր կազմաւորման հրաչքը, սանկ տասէն-տասնհինգէն ետք, երբ թանձրութիւն ճարեն ընկալուչ անոր ջիղերը, կրել կարենալու համար անհուն ծանրութեամբ այդ պատկերները: Մաթիկ Մելիքխանեանը, հակառակ բժշկական ճիւղի մը սպասը ընելուն, անտարբեր էր այս ամէնուն: Անիկա չըսաւ հիւանդութիւնը իր հօրը, որ մեռած էր, մենէ չա-